

ԿՐԿԻՆ ՎԻՄԱԳԻՐ ՓԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆ

Հին դիր ու գրականություն, մատենագրություն ունեցող բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը, ստեղծել և լայնորեն օգտագործել են փակագրությունը: Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները, մասնագետների հավաստմամբ, մեղանից 6—7 հազար տարի առաջ մարդու գրավոր խոսքի առաջին կ ժայռապատկերներում օգտագործել են զաղափարագիր նշանագրեր: Դրանք կիրառություն են ունեցել նաև սեպագիր արձանագրություններում: Այս կարգը բնորոշ լինելով գրի և գրավոր խոսքի նախնական փուլին, այնուհետև ավանդույթի ու ժ ստանալով անցել է հայագիր տեքստերին: Փակագրությունը և զաղափարագրերը վաղ շրջանից սկսած մեծ կիրառություն են գտել հայ վիմագրերում:

Հայտնի է, որ տեղ ու ժամանակ խնայելու, թե այլ նկատառումով արված համառոտագրումը (կցագրում կամ փակագրում) դժվարացնում է վիմագրերի ստույգ ու անսխալ վերծանումը և հաճախ տեղիք է տալիս կարևոր բառիմաստների միջազնայն ու աղավաղման: Կապգրերի սխալ տառանջատման հետևանքով տեքստերի խաթարումների, իմաստազրկման բազմապիսի օրինակներ է նշել լեզվաբան-վիմագրագետ Ս. Ավագյանը¹:

Վիմագիր արձանագրությունների ընդօրինակումն ու վերծանումը պահանջում են արտակարգ զգուշություն, և փոքր-ինչ հապճեպությունն ու անուշադրությունը կարող են հետագա բարդությունների տեղիք տալ: Այսպես, «Դիվան հայ վիմագրության» I պրակի 265-րդ համարի տակ² հանդես եկող կապգրերով ու կցագրերով հիշատակագրությունը չի վերծանվել թերևս ոչ ճիշտ ընդօրինակման հետևանքով: Մանրակրկիտ զննելով աշխատության XXV տախտակում դրված լուսանկարը՝ լրացվել են փոքր վրիպումները և դյուրությամբ վերծանվել այդ հիշատակագրությունը (գծ. 1). ... [ԲԱՂ]ԴԱՍԱՐ ԵՐԵՅ ՅԱՂԱԻԹՍ [ՅԻՇԵՅԵՔ]: Կամ՝ Նորավանքի փոքր խաչքարերից մեկի արձանագրության մեջ Ս. Բարխուդարյանը ՎԱՆԱԿԱՆԻ փոխարեն կարդացել է ՎԱՆԱՎԱՆՅ, թեև Ա-ից հետո սպասելի է ոչ թե եկճյուղ (ինչպես կա), այլ միաճյուղ Ի: Իսկ Վարդենիսի շրջանի Ակունք գյուղի Գոմեր հնավայրի ՋՂԵ—1526 թվակիր խաչքարի վարպետ ՄԱՄՎԷԼ-ի անունը ընթերցվել է ԱՎԵԼ⁴: Կամ, ասենք, Հայրավանքի գավթի և եկեղեցու կից պատի հարավային ճակատի արձանագրության առաջին երեք տողերը վերծանվել են այսպես. Ի ՏԱԻՆԻ ՍՐԲՈՅՆ Ա/ՆՏՈՆԻ: Ա: ԺԱՄ ԱՐԱՐԵՆ/ ԱՆԲԱՅՐԱՆԻ: Ա: . . . ՏԻԿՆԱՅ⁵, իսկ մեր ընդօրինակությամբ նույն հատվածը ստանում է (գծ. 2) Ի ՏԱԻՆԻ ՍՐԲՈՅՆ Ա/ՆՏՈՆԻ Ա: ԺԱՄ ԱՐՆԵՆ / ԱՆԲԱՅՐԱՆԻ, Ա: ՍԻՍ ՏԻԿՆԱՅ պատկերը՝ վերականգնելով Սիս անունը և առաջին փոխարեն առաջարկելով միանգամայն տրամաբանական աբեցեը, որոնց գրերը քարի վրա որոշակիորեն տեսանելի են:

Ահա և մի այլ օրինակ: Դսեղի հանրահայտ Սիրուն խաչի խորանի շրթ-

1 Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, 1978:

2 «Դիվան հայ վիմագրության» (այսուհետև՝ «Դիվան»), պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966:

3 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1977, էջ 227, արձ. 725:

4 «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 356, արձ. 1431:

5 Նույն տեղում, էջ 76, արձ. 283:

հղերի արձանագրության միջնամասը հրատարակվել է այսպես. «...Յիշատակին Չ (?) Եւ Ասլան Բեկին...» և փորձ է արվել հարցվող Չ-ն հրամցնել թիվ, գտնելով, որ «Արձանագրության մեջ նշված Չ-ն հավանաբար խաչքարի քանդակման ժամանակին է վերաբերում, որի դեպքում կունենանք 1251 թվականը»⁶։ Այնուհետև նույն հեղինակն անդրադառնալով «Հաղթանակների և երկրի ազատության առթիվ կանգնեցված» խաչքարերին, դրանց թվին է դասում նաև 1251 թ. քանդակված Սիրուն խաչը⁷, որով օրինականացնում է խաչքարի պատրաստման տարեթիվը։ Նշենք, որ արձանագրության միջնամասում թվի գործածումը հավանական չէ։ Իրականում սովյալ հատվածը աներկբա կարդացվում է՝ «...ՅԻՇԱՏԱԿ ԻՆՉ ԵՒ ԱՍԼԱՆ ԲԷԿԻՆ...»։ Այսպիսով, ինձ դերանվան սկզբի երկու տառերը միացվել են նախորդ բառին, իսկ վերջինը կարդացվել է Չ (յիշատակին Չ—1251, փոխանակ՝ յիշատակ ինձ) և տեղիք է տրվել թյուրիմացության։ Ավելացնենք, որ նույն խաչքարի քիմի՝ գահին բազմած Քրիստոսի քանդակի մոտ և կրծքին սեղմած Ս. Գրքին փորված գրերը ընթերցվել են ըստ նախ չափերի պատճառով⁸ և չի տրվել որևէ բացատրություն, թե՛րև թեմային շանչվելու պատճառով։ Իրականում այնտեղ հիշատակված է ՅԻՍՈՒՅՍ ՔՐԻՍՏՈՍ / և ԵՍ ԵՄ / ԼՈՅՍԼՍ ավետարանական խոսքերը, որոնք հաճախ են հանդիպում մանրանկարներում և խաչքարերի արձանագրություններում։ Նշենք նաև, որ վիմագրի «յիշատակ ինձ և Ասլան Բեկին» հատվածը միանգամայն ճիշտ է ընթերցել Ս. Զալալյանը⁹ մեկ ու կես դար առաջ։ Սիրուն խաչի արձանագրությունը թվագրված չէ, բայց դրա XIII դ. լինելը կասկածից վեր է։ Ավելացնենք նաև, որ այս արձանագրության մեջ ազատագրական պայքարի կոչի կամ օտար լծի թոթափման մասին ոչ մի ակնարկ չկա։

Սակայն սովյալ դեպքում մեզ առավել հետաքրքրողը բարդ ու դժվարամատչելի միատառ փակագրերն են։ Մենք թերևս կրկին շանդրադառնայինք վիմագիր փակագրերին, եթե չլինեք երկու շարժառիթ։ Նախ, առանձին պրպտումների ընթացքում հավաքվել են նորերը, որոնք արժե հրատարակել և ապա, որոշ հետազոտողներ գործի բերումով ընդօրինակելով փակագրերը, երբեմն անհրաժեշտ հոգատարություն չեն ցուցաբերում դրանց վերծանելու ուղղությամբ։ Մինչդեռ փակագրերը, ինչպիսին և որ ժամանակի էլ լինեն, արժանի են ամենալուրջ ուշադրության և ստույգ վերծանման, քանի որ դրանց տակ թաքնված են միջնադարյան մտավորականների, քանդակագործների, ճարտարապետների, մեկենասների, վանական հաստատությունների առաջնորդների անուններ և դրանցով ևս լրացվում են նրանց կենսագրության աղոտ էջերը։ Ժամանակագրական հաջորդականությունով ստորև ներկայացնում ենք մի շարք փակագրեր (VII—XIX գդ.)։

ԱՂԱՄՆԻԿ (գծ. 3).—Գեղագիր, մոտ 10×10 սմ չափի այս փակագիրը փորագրված է Հառիճավանքի հին եկեղեցու հյուսիսային մուտքի ձախ թևում, ծակոտկեն տուֆաքարի վրա։ Անշուշտ, կասկած չի հարուցում, որ այն եկեղեցու կառուցման ժամանակվանից է (VII դ.) և այդ դեպքում ընդունելի համարվող կարծիքով փակագրի տակ հանդես եկողը պետք է որ լինի այդ հորինվածքի ճարտարապետը կամ աչքի ընկնող վարպետներից մեկը։ Միանգամայն տեսանելի տեղում գրված անունը թերևս կարող էր-Աղանիկ (Աղան) լինել, որը հայոց մեջ դորածական է վաղնջական ժամանակներից, բայց փակագրի աջ տեղանին շատ հստակ նկարված է Մ-ի աջ ելունը։ Ինչպես էլ տառանշատենք (Մադանիկ, Անմաղիկ, Աղամնիկ), մենք էլ կասկածելի։ Ներկայացվող ստույգ դժագիրը կարող է օգտակար լինել այն բացելու նոր փորձերի համար։

ԵՂԻՇԷ (գծ. 4).—Կարծես հետզհետե ճանաչում է ստանում հուշարձանների որմերի կիսատ-պռատ, չամբողջացող, երբեմն՝ լքնկալվող, չվերծանվող

6 Ա. Շահինյան, Հայկական խաչքարերի արվեստը (Եջմիածին), 1960, Ը, էջ 46)։


7 Նույն տեղում, Թ, էջ 49։

8 Նույն տեղում։



9 «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», աշխատասիրությամբ Սարգիս վարդապետ Զալալյանց, մասն Ա, Տիգրիս, 1842, էջ 117—118։

1
"ԱԵԷՅՅԱԱԹ:

2
∴ ԻՏԱՆԻՄԲՈՅԱ
ՆՏՈՒՆԱՅԻՆԵՆ
ԼԻՖԱՅԱՆԻԱՆԻՍ
ՏԻԿԱՅ.....



4 7 5




8 9

10

ԻԹԷՆՈՅԷՍՍՄՆԻՐՈՍԵԻՍԱՐԳԻՍԻՄՆ
ԱՆԱՅԲԵԷԷԲԱՐԲԻՅՈՎԱՆԵՍԵԻՄԻԹ
ԱԿԱԳՆԵՅԱԲԶԻԱՅՍԻԲԱՐԵԻԱՍՈՐԻ
ՀԱՐՄԵՐՈԳՐԻԳՈՐԲԱՅԱՍԻԿԱՐԴԱՅ
ՀԻԹԵՍՉԻԲԻՏԻԵԻԱՅՅԻՇՈՂԱՅԻՈՐ


15

ՄԻ ԵՄ



18

26 27



20
ԼՍՊԵՊԵԼԼԼ
ԵՄԱՅԷՆԳԻՄՊԱՐՈՆԻ
21
ԵՄԱՅՍԱՍ ՄԱԿՈՐ

22
ԳԵՅՏԻՈՐ
ՅԱՇԵՐՏ
ԳԱՆԻՑԻ
ՄԱԼԴԵՎ

23
ԱՍԵԸ
ԱԳՍՏ
ՈՎԱԿ
ՍՍՈՐ



25
ՂԱԶԱՐ
ԼԵՍԱՐՍՅԻ
ՀՅԲԻՐ
ՃԵԵ

24 ԱՅՍԱԳԼԵԲԴԵՄԵՆԵՅՈՐ 28 Ս.Թ.Կ 29-18 ԵՄ 77

գրերը գրչափորձ համարելու վարկածը: Մենք հակառակ կարծիքի ենք, որովհետև քանիցս համոզվել ենք, որ անվարժ ձեռքով իսկ գրված, անգամ՝ երկաթե ղալամով խզրզված տառերը անհիմաստ խաղեր չեն և ինչ-որ բան նշանակում են: Այդպիսի «գրչախաղերը» չափազանց շատ են Նղվարդի եռահարկ տաճարի, Գանձասարի վանքի, Արենիի եկեղեցու, Գայանեի տաճարի, Սանահինի գրատան և շատ այլ նշանավոր հուշարձանների պատերին: Նման մի կցագիր նկատել ենք Հառիճավանքի VII դ. եկեղեցու բեմին կից ակոսանիստին (Աղամ-նիկից ոչ հեռու) և այն վերծանել ենք ՆՂԻՇԷ:

ԽԱԶ (գծ. 5).—Բառիմաստի արտահայտումը խաչքանդակով մատնանշվել է խոր վիրապի 1737 թ. օրինակով¹⁰, Սակայն ավելի նախնական նմուշ կա Իմիրզեկից (Արտաշատի շրջան) էջմիածին տեղափոխված խաչքարի վրա: Դա փոքր չափի (1,20 մ) կարմրավուն բազալտե խաչքար է, որի չորս եզրաշրջերին և կոթունին արձանագրված է. Թ.ՇՂԷ (1148). ԽԱԶՍՍ ԴԵՂՈՅՆ Ա, ՈՐ ՍՊԱՆԻՆ ԻՍ ԲՐԻՍՈՆՍՍՍ, ՍՈՒՐԻՐ ԽԱԶԻՆ ԻՍԱՐԻՆ ՅԻՇԵԱ: Հիմնական տեքստին երկրորդ խաչ (+) բառիմաստի անմիջական մասնակցությունը շեշտելու համար այն առնվել է շրջանակի մեջ: Այս դեպքում բառի փոխարեն հանդես է գալիս նրա գաղափարանշան խաչը (+): Ըստ արձանագրության չի բացահայտվում իսարի առնչությունը խաչքարի կանգնեցման հանգամանքներին և, պատվիրատու չլինելու դեպքում, նրան կվերապահվի վարպետի պատիվը: Ավելացնենք, որ արձանագրությունում հետաքրքիր է նաև է օժանդակ բալի փոխարեն Ա-ի կիրառությունը՝ իբրև տեղական խոսվածքի արտահայտություն, որն այժմ էլ պահպանվում է հյուսիս-արևելյան Հայաստանի, Արցախի, Երևանի և այլ խոսվածքներում:

ՄԱՐԻԱՆ (գծ. 6).—Անունը փակագրված է Աշտարակի Կարմրավոր եկեղեցու մոտ եղած խաչքարի պատվանդանի արձանագրության երրորդ տողի վերջում: Խաչքարը (որն այժմ չկա) կանգնեցրել է Սարգիս կազմողը՝ 1184 թ.: Արձանագրության հրատարակչի ենթադրությամբ փակագիրը անվերծանելի անուն է¹¹, Կարծում ենք Մարիան տառադարձումը հավաստի է:

ԴԱԻԻԹ (գծ. 7).—Այս անունը բոլորից շատ է փակագրված հայ վիմագրերում՝ V դարից մինչև մեր օրերը: Ներկայացվող օրինակը նկատել և ընդօրինակել է հնագետ Ֆ. Մուրադյանը, Ամբերդի ամրոցից 500 մ հյուսիս, ճանապարհի եզրի գերեզմանոցի երկատված խաչքարից: XII—XIII դդ. այս կոթողի ստորին մասի բազմաստիճան Դողգոթա-գիկկուրատի մեջ տեղադրված է վարպետի փակագիր անունը: Նմանաձև փակագրեր կան Ավանում, Կարճաղբուրում, Մուղնիում, Հավուց Թառում և այլուր (XV—XVII դդ.):

ՈՐ ՈՐԻՆ (գծ. 8).—Փակագրության նման ձևեր նկատել ենք խորակերտի վանքի XIII դ. վիմագրերից մեկում: Առավել ցայտուն օրինակ կա Աղջոց վանքի գլխավոր եկեղեցու արևմտյան ջրամուտքի ճակատակալ քարի քանդակաշարքի տակ՝ Գրիգոր խաղբակյանի 1217 թ. արձանագրության մեջ: Հմտորեն կցագրված երեք տառերը Գրիգոր անվան վերջին և հաջորդ՝ ՈՐԴ-ի բառի առաջին եզրերն են: Սա կոկին հավաստում է, որ նման կցագրերը հնարավոր է ստույգ բացել-վերծանել միմիայն բառիմաստների ճիշտ ընկալման դեպքում, այլապես դրանք կմնան անմեկնելի: Փակագիրը կրող պատմական, տնտեսական, շինարարական նկատառումով այս կարևոր վկայագրին Վ. Միսեկից և Բ. Հովհաննիսյանից¹² հետո անդրադարձել է նաև Գ. Հովսեփյանը՝ խաղբակյաններին նվիրված եռահատորում¹³:

ԱՄՆԵՆ (գծ. 9).—Մրա միատառ փակագրությունը շատ տարածված է հայ վիմագրերում: Սակայն միշտ չէ, որ Ա տառամայրին կցվում-հարմարեցվում

¹⁰ Սուրեն Սաղումյան, Փակագրությունը հայ վիմագրության մեջ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 3):

¹¹ Ա. Շահինյան, Նղվ. հոդվ., էջ 42:

¹² «Материалы по археологии Кавказа», вып. XIII, М., 1916, с. 58.

¹³ Գարեգին Հովսեփյան, խաղբակյանք կամ Պոռոջյանք հայոց պատմության մեջ. հ. Գ, Նյու Յորք, 1942/3, էջ 65—66:

են բոլոր տառերը և, առանձնապես, սակավ է է-ի փոխարինումը ն-ով ինչպես այս դեպքում: Ներկայացվող օրինակը Կեղառիսի վանքի ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատի արձանագրության վերջում է, որ խոսվում է Վարդաբեյի կողմից Երևանում ալգի գնելու և վանքին նվիրելու գործարքի մասին: Գ. Հովսեփյանը շտկել է նախորդ հրատարակիչների վրիպումներն ու սխալները և միաժամանակ ՈՄԳ—1204 թիվը սրբագրել ՈԺԲ—1163-ով՝ այն համարելով նախախաղբակյան շրջանի փաստաթղթի¹⁴: Մեր կարծիքով, չնայած թվատառի տասնավորի ստորին շրջանկարի փոքրությունը, այն ոչ թե Ժ, այլ Ս է. դրանում կարելի է համոզվել նույն արձանագրության ծառ բառի Ժ-ի լրիվ ձևի հակված և թվատառում Ս-ի դեպի աջ կլորված տառաձևերի բաղդատությունը:

ԱՄԷՆ (գծ. 10).—Անշուշտ, նկատի է առնվում, որ բառը փակագիր լինելուց բացի վիճաբեր տեքստերում կատարում է որոշակի դեր և ունի հատուկ իմաստ: Իբրև կարգ, այն դրվում է արձանագրությունների վերջում, հավաստելով մտքի ավարտը: Ամեն փակագրով ավարտվող արձանագրություններից է, օրինակ, Արամուհի հարավ-արևմտյան եզրի բլրագագաթի մատուռից քիչ արևմուտք, Հաղթատ-օձունյան ոճի խաչքարի բազմաստիճան պատվանդանի արձանագրությունը:

I Ի ԹՎ. ՈՄԳ (1205) ԵՄ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ԵՒ ՍԱՐԳԻՍ [Ք] Ա [Հ]

II ԱՆԱՅՔ ԵՒ ԵՂԱՐՔ ԻՄ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ՄԽԻԹ

III ԱՐ ԿԱՆՅՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԷՆԱԽՍՈՒԹԻԻՆ

IV ՆԱՐ ՄԵՐՈՒ ԳՐԻԳՈՐԻՔ ՔԱՀԱՆԱԽ, ՈՐ ԿԱՐԴԱՅ

V [Ք] ՅԻՇԵՍԱՋԻԲ Ի Տ[Է]Ր ԵՒ Ա[ՍՏՈՒԱ]Ս ՅԻՇՈՂԱՅԳ ՈՂՈՐ

VI

ՄԻ. ԱՄԷՆ:

ԱՄԷՆ (գծ. 11).—Փակագրել է իսաչիկ գրիչը Սաղմոսավանքի գլխավոր եկեղեցու արևմտյան պատի մուտքի վերևում գրված ընդարձակ նվիրագրի վերջում: Արձանագրության հավաստմամբ, Քրդի և Մարծպան Մամիկոնյանի դուստր Խորիշահի (հրատարակիչների մոտ՝ Տալխաշահ) որդի Վաչե Իշխանը տասը հազար «սպիտակով» (արծաթով) «դարձեալ վերստին» գնում է Աղկունձ գյուղը և կրկին նվիրում է վանքին, քանի որ իր պապ Վաչեի կողմից «մեծ սպառնապետ» Զաքարիայ գնելուց հետո նվիրապայմանը «խափանվել էր ի լար պատահմանց»՝ եկել ի վերա աշխարհիս: Հետաքրքրող փակագրում չի տրվել ն-ի ստորին բոլորակը, իսկ է-ն գրված է լոթերորդով:

ԱՄԷՆ (գծ. 12).—Այս դեպքում փակագրել է Շահիկ գրիչը՝ Տեղերի վանքի ԶԻԳ—1274 թ. նվիրագրում: Գծագրում պարզորոշ դիտվում է, որ փորվել են բոլոր տառերն անխտիր, այդ թվում՝ ն-ի ստորին բոլորակը, որը, ինչպես ասվեց, երբեմն չի արվում: Զի բացառվում Շահիկ գրչի նույնացումը 1301 թ. Ագիգեկյանների մեկնաստությանը հղվարդում կառուցված եռահարկ եկեղեցու ճարտարապետ (վարդապետ) Շահիկի հետ: Ամեն բառի փակագրումը ընդհանրական է բոլոր հոգևոր կենտրոնների վիճագրերում: Մենք նպատակ չունենք վեր հանելու բառի փակագրման բոլոր ձևերը, որոնց թիվն անցնում է երկու տասնյակից¹⁵, ուստի բավարարվենք բերված նմուշներով:

ՍԱՐԳԻՍԱ (գծ. 13, նկ. 1).—Փակագիրը Վայոց ձորի Քարեփի (հոտակերաց) վանքի գլխավոր եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյան հղկված քրվի վրա է, եկեղեցու վերանորոգման արձանագրության մեջ գրված ՍՄՊԱՏ անվան տակ: Տեղադրի հեղինակները քանիցս անդրադարձել են փակագրին և վերժանել Սմբատ արքա: Քաջբերունին, ընդօրինակելով Որբեկյանների կողմից XIII դ. վանքի նորոգության նշված արձանագրությունը, գրում է նաև, որ «Եկեղեցու վերին անկյուններում փակագիր ձևով փորագրված է «Սմբատ ար-

¹⁴ Գ արեգին Հովսեփյան, խաղբակյան կամ Պոռչյան հայոց պատմության մեջ, մասն երկրորդ, Նրուսաղեմ, 1944, էջ 7, 12, 22, նույնի Գ. Գ, էջ 30:

¹⁵ Ամեն բառի փակագրման, համառոտագրման տարատեսակների մասին տե՛ս «Համառոտագրությունը հայ վիճագրության մեջ» մեր հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ Արաբեր, 1978, № 4, էջ 75):

քայ»¹⁶։ Ղ. Աբիշանը ևս ակնարկում է այդ մասին՝ փակագիրը վերագրելով Սմբատ Օրբելյանին՝ «Անուն Սմբատայ՝ Սմբատ արքայ փակագրովի նշմարի ի բարձու ուրեք եկեղեցւոյն»¹⁷։ Ս. Բարխուդարյանը, նախորդ հեղինակներից չաղելով այս հաղորդումը, նշում է, որ քիվը «այժմ տեղում չկա... Թերևս դրանցից մեկն այն է, որ մենք Սարգիս ենք վերծանում»¹⁸։ Մանրակրկիտ զննու-



Նկ. 1.

մից պարզվում է, որ այս արձանագրությունը մեզ է հասել անխաթար՝ Նղաժ երկու փակագրերով։ Սմբատ արքայ կազմել հնարավոր է. դրանցից մեկը, ինչպես ասվեց, միանգամայն ստույգ բացել է Ս. Բարխուդարյանը, իսկ մյուսը չի վերծանված։ Պետք է ենթադրել, որ արձանագրության մեջ հիշատակված Սմբատ անունը և նրա տակ եղած փակագիրը միացվել են իրար և վերջինս ընթերցվել է արքայ՝ այն վերագրելով Օրբելյան տոհմի ականավոր ներկայացուցչին։ Սակայն պարզվում է, որ փակագիրը պետք է կարդալ Սարգիսա, քանի որ Ա տառամայրի վրա կրկնակի ստեղծ է արված։ Կարծում ենք այսպիսի վերծանությունը ճիշտ է և այն նույնանում է եկեղեցու հյուսիս-արևելյան անկյունաքիվի փակագրում հանդես եկող Սարգսին։ Կատարածից վեր է, որ նա նույն արձանագրության մեջ ակնարկված Սարգիս եպիսկոպոս ժողով է՝ հիշատակագրության տեքստի կազմողը, և տեական հոշովով նրա անվանագիրը (Սարգիսա-Սարգիս) պետք է ընկալել որպես վերջինիս կողմից արձանագրությունը կազմելու կրկնակի հավաստիացում։

ԴԱԻԻԹ (գծ. 14).—Ընդօրինակել և վերծանել է Ս. Բարխուդարյանը՝ Հերմոնի վանքի (Նղեզնաձորի շրջան) ս. Գրիգոր եկեղեցու մուլթին ագուցված բեկորի արձանագրությունից¹⁹։ Այն կարելի է վերագրել XIII դարին։

ՉՁԸ (գծ. 15).— Այս թվատառերի գեղագիտական ձևավորումը հայ գրիչ-

16 Ք ա ջ Բ ր Ե ի, Ճանապարհորդական նկատողությունը («Արարատ», 1859, սեպտեմբեր, էջ 523)։

17 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 171։

18 «Դիվան», պրակ III, էջ 206—207, արձ. 687։

19 Նույն տեղում, էջ 134, արձ. 394։

ների երեւակայութեան թռիչքի հնարանքներից է: Ըստ էութեան այն փակագիր չէ, սակայն տապանաքարի՝ մարդագլխի շոջագծով 2-ի և 2-ի կիսաշրջանակները ուղղակի ձուլվել են պայտաշոջանին և առաջին հայացքից դժվար է կրուահել, որ դրանք տառեր են: Տապանաքարը բացվել է նորերս, Գառնի գյուղի ս. Աստվածածին (սխալմամբ Մաշտոց հայրապետ կոչվող) եկեղեցու փլատակները մաքրելու ընթացքում, հուշարձանից մի քանի մետր հյուսիս-արեւմուտք: Ամբողջական արձանագրութիւնն է՝ 22Ը (1339 թ.). յԱՅՍ է ՀԱՆԿԻՍՏ/ ԱՔԷԼԻ: ՏՆՈՎ (գծ. 16).—Բարդ մեկ անգամ փակագրված է Ավանի ս. Հովհաննես եկեղեցու արեւմտյան պատի արձանագրութեան մեջ: Դա Վարդանի և իր կին Կոթիշահի ընծայագիրն է, ըստ ողի նվեր է տրվել նաև աչգու մեջ եղած տունը: Փակագրին սկզբից կցված Մ-ն նախորդ՝ ճովում բառի վերջին գիրն է: Արձանագրութիւնը վերաբերում է XIV—XV դարերին²⁰:

ՊԱԿԻՂ[ՈՍ] (գծ. 17).—Իրականում ոչ թե փակագիր է, այլ կցագիր համառոտագրութիւն՝ փորագրված Գառնի գյուղի ս. Աստվածածին եկեղեցու մոտի որմնախաչի արեւելյան պատին: Գրածեքը հաղիվ թե XV դ. վաղ լինեն և հնարավոր չէ պարզել Պողոսի ու լինելը և հուշարձանի հետ ունեցած նրա առնչությունը: Գրերի վրա կա սակավադեպ զարդանախշ պատվի նշան՝ կենաց ծառի ոճավորումով:

Խաչքարը կանգնեցրել են Հովհաննեսը և նրա կին Աղուտրիկը իրենց ծնողների հիշատակի համար. այն հողմնահարված ու ջարդոտված է, բայց արեւմրտյան ճակատի քիվատակին մնում են ՄԽ Մ քեղագիր տառերը, որոնք կարող են վերաբերվել վարպետ Մխիթարին: Այնպես որ Պողոսը քարգործ լինելի կարող ինչպես աչ, այնպես էլ ժամանակագրական նկատառումով:

ՑԱԿՈՐԱԷ է ՍՈՒՐԲ ԽԱՉՍ (գծ. 18).—Փակագրված է Աղջոց վանքի գավթի թի հրավայրի որմնաքան փրա, ներսից, երեք տառերի վրա: Գծախաչի երկու կողմի պարզ փակագրերը, կարծում ենք, վերաբերում են XV դ.:

ԹՎ. ՌԽԲ (1593) ԷՐ (գծ. 19).—Վերջին դարերում տարածվեց նաև Թվերի փակագրումը: Այն իբրև կարգ հրամարեցվում է Ռ տառամայրի վրա և վերծանվում է առանց մեծ ջանքերի: Աղջոց վանքում, Գանձասարում, Զուղայում և այլուր հանդիպող թվափակագրերը բավականին նման են իրար: Ներկայացվող այս օրինակը նորավանքում է, 1275 թ. Սիրանես ճարտարապետի կառուցած տապանատան արեւմտյան մասի մաքրման ժամանակ բացված տապանաքարի վրա: Այն բավականին խոշոր է և դուրընթեռնելի: Տապանատան առջևի փլատակներից հանվել է նաև մի խաչքար՝ քանդակահյուսված նրբին բուսականորեն: Դա հայկական արվեստի գլուխգործոցներից մեկն է՝ արտակարգ նրբութեամբ և սյուսետային հարստությամբ: Քիվի տակ, եռակամար վարսանդապտղային դարդի մեջ գահին բազմած Քրիստոսն է՝ աջն օրհնելու համար վեր պարզած, ձախով՝ ԵՍ ԵՄ Լ/ՈՅՍ/Ս մանրագրով տուրք գիրքը բռնած, իսկ՝ գահին կից՝ ավետարանիչների խորհրդանշանները: Խաչի խորանի կողքերին 12 առաքյալների բարձրաքանդակներն են՝ առնված ումբաձև մեղալիսների մեջ, որոնցից անվանագրված են միայն երկուսը՝ ՊԵՏ/ՐՈՍ, ԱՆԴ/ՐԷԼԱՍ/։ Քիվի զարդահենքին հյուսված ուռուցիկ տառերով արձանագրութիւնը մնասված է և քնթեցվում է որոշ վերապահութեամբ. ՅԻՇԵԱ ԱՌ Ք/ՐԻՍՏՈՒՍ Ա/ՍՏՈՒԱԼ ՊԱՅՍԱՌ ԱՆՈՒԴԻ ԴԵՇԱՆԱՑՆ ՊԻՐԹԷԼԻՆ ՄԱԻՐ ԹԱՄԹՈՅ: Տարսայիձի հարս Թամթան մահացել է 1312 թ. և թաղված է Սմբատի դամբարանում²¹: Նրա պատվերով Մոմիկը հորինել է երկու խաչքար՝ մեկը աթաբեք Տարսայիձի (1308 թ.), մյուսը՝ իր ամուսին էլիզավի (մահ. 1300 թ.) հիշատակին²²: Թամթա խաթունի պատվին կանգնեցված այս խաչքարը ևս (տեղափոխվել է Եղեգնաձորի Թանգարան) հոդիմված է Մոմիկի ձեռքով, Թամթա խաթուն

20 Տե՛ս Ս. Ս ա ղ ու մ յ ա ն, Ավանի անտիպ վիճագրերը («Բանբեր Երևանի համալսարանի», 1980, № 1) 4

21 «Գիվանա, պրակ III, էջ 238, արձ. 778:

22 Նույն տեղում, էջ 243, արձ. 794, 795:


հանի մոտ է։ Վանքի վերջին վերելքը կապված է նշանավոր ուսուցչապետ, ժամանակի ուսյալ և առաջադեմ մտավորականներից մեկի՝ Առաքել Զուղայեցու անվան հետ։ Նրա նախաձեռնությամբ քայքայված ու կիսակործան մենաստանը լրիվ վերականգնվում է։ Եկեղեցու արևելյան լուսամուտի ներքին նորաշար գոտուն գրված թվ. ՌՃԺ—1661-ից պետք է ենթադրել, որ առնվազն այդ տարում է սկսվել կենտրոնազմբեթ, բազմաբսիդ եկեղեցու նորոգումը։ Այս ոչ մեծածավալ կառույցի վերականգնումը բավականին երկար է տևում հավանաբար նյութական սուղ միջոցների և ալլևալլ դժվարությունների պատճառով։ Նորոգումն ավարտվում է 1666 թ., ինչպես հավաստում է հարավային պատի արձանագրությունը²⁵։ Շինարարական այս վավերագրից դժվար չէ կընթացել, որ աշխատանքների ծանրությունն ամբողջովին ընկած էր վանքի աղքատիկ միաբանության վրա, որոնց մասին էլ պահպանվում են հիշատակություններ։ Ահա փակագիրը և նրան ձախից անմիջապես կցված արձանագրությունը. ՂԱԶԱՐ / ԼՈՒՍԱՐԱՐՍ ՅԻ/ ՇԼԵՅԼԷԺ. ԹՎ. Ռ/ՃԺԵ (1666), ԽԱԶԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՑԻ։ Այս Ղազարը թերևս նորոգության մեծ արձանագրության մեջ հիշված Ղազար ստրկավազն է և, ըստ երևույթին, նրա մասնակցությունը ձեռնարկմանը այնքան նշանակալից է եղել, որ թուլլատրվել է հանդես գալու առաջնորդի՝ Խաչատուրի հետ։ Բերված հիշատակությունները ճշտում են վանքի վերանորոգման ժամանակը, որի ավարտի հետ առաջնորդի անունը փակագրով դրոշմվել է հուշարձանի պատին, այն էլ՝ չերևացող տեղում։ Օգտվելով առիթից նշենք նաև, որ եկեղեցու արևմտյան թևի փոքր զանգակատան շուրջ սյուները կիսված խաչեր են։ Հարավ-արևմտյան «սյուներ» խաչքարի ձախ մասն է, որի խաչաթևի վերին ձախ անկյունում մնում է ելնդատառ ԹՎ., իսկ հյուսիս-արևմտյանին՝ ՌԺԲ, որն է՝ ԹՎ. ՌԺԲ (1563)։ Զի բացատրում, որ խաչքարերը ուտոնդայի սյուներ դարձվեին XIX դ. նորոգության ընթացքում, Հարավ-արևելյան լանջի լիցքի մեջ մխրճված մի խաչաքեկորդ վրա նշմարվում էր՝ [ԻՍԿԱՆ]ԴԱՐ ԱՂԻՆ]։ Նորոգությունների ընթացքում պատերի մեջ խառնիխուռն խցկել են Գրիգոր Սուփանի IX դ. արձանագրության մի քանի քարերը։

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ (գծ. 26).—Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերշեր գյուղի ս. Գրիգորիս (1667—1676) եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի 1673 թվականի ընդարձակ արձանագրության տակ եղած երեք փակագրերից երկուսը վերծանվել է այսպես. Պետրոս կաթողիկոս և Դավիթ, իսկ երրորդը՝ չի բացվել։ Նույն հուշարձանի արևմտյան մուտքի վերևի կամարի մեջ ազուցված քարի արձանագրությանը կից երեք փակագրերը վերծանվել են՝ Պետրոս կաթողիկոս, Ղուկաս Վարդապետ և Բարսեղ եպիսկոպոս՝ նրանց նույնացնելով արձանագրություններում հանդես եկող Աղվանից կաթողիկոս Պետրոսի, նրա ուսուցիչ Ղուկասի և աշակերտ Բարսեղի հետ²⁶։ Ցավոք, արձանագրությունների և փակագրերի լուսանկարները տրված չեն և հնարավորություն չունենք ստուգելու գծագրերի հարազատությունը բնագրերին։ Հարցադրումը ինքնին ծագում է այն պատճառով, որ պրակում ներկայացված գրապատկերներով հնարավոր չէ առաջարկված վերծանությունը։ Իրրև նախնական և ոչ անվերապահ կարծիք, մեզ երկմտելի է թվում արձանագրություններում և փակագրերի տակ հանդես եկող անձանց նույնացումը, մանավանդ որ, ինչպես ասից, տրված գծագրերով ոչ մի կերպ չի համնավորվում այդ անվանումների վերականգնումը։ Առանձնապես կասկածելի է առաջին և երկրորդ արձանագրություններին կից մեկական փակագրերի բացումը ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ձևով, որովհետև դրանք բավական տարբեր են միմյանցից։ Ինչ մնում է առաջին արձանագրության շմեկնված փակագրին, ապա այն հնարավոր է բացել՝ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ, իսկ մյուսը՝ ՏԷՐ ԴԱԻԻԹ՝ լրացնելով ԽԷՐ բառը։ Մնացած

²⁵ «Դիվան», պրակ IV, էջ 292, արձ. 1213։ Հուշարձանի վերջին ամբողջական վերականգնումը կատարվել է 1980 թ., ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ու օգտագործման վարչության կողմից։

²⁶ «Դիվան», պրակ V, էջ 165, արձ. 571—572։

քաղմատառ փակագրերի մասին կարելի է խոսել, ինչպես ականավոր արևելագետ և վիմագրագետ Հ. Օրբելին է ասել՝ «ընդօրինակության ճշգրտությունն ասպահովող բավարար երաշխիքներ» ունենալու դեպքում²⁷:



Նկ. 2.

ԹԱԴԻՈՍ (գծ. 27, նկ. 2).—Անձնանունը փակագրված է Գանձասարի վանքի պարտալի հյուսիսային թևին կից, արևելյան կողմից երկրորդ սենյակի մուտքի ձախ կողաքարին: Այն, փոքր սպրդումներով, ընդօրինակել է Բ. Ուլուբաբյանը՝ համարելով «կառուցող վարպետի նշան»²⁸, ինչ խոսք, դա ոչ թե նշան, այլ փակագիր է և բացվում է ոչ մեծ դժվարությամբ: Այն կարելի է թվագրել XVII—XVIII դարերով:

Գանձասարի վանքի հյուսիսային պատի երեք փակագրեր տեղ են գտել Բ. Ուլուբաբյանի²⁹ և Ս. Բարխուդարյանի³⁰ վերջին աշխատություններում՝ առանց վերծանման: Ավելի վաղ, վիմագիր փակագրերին նախընթաց մեր մի հոդվածում դրանք վերծանել ենք՝ Ստեփանոս կաթողիկոս. Ագրեվարդ և Մաթեոս կաթողիկոս տառադարձմամբ³¹:

Յ.Ն.Թ.Հ. (գծ. 28).—Խանլարի շրջանի երեքմանի հայկական Աբլահ գյուղի (այժմ՝ տեղահանված) ս. Մինաս եկեղեցու հարավային պատին ագուցված քարի այս արձանագրությունը (ուր ահնարկվում է Թահմազ շահի կողմից բացում գավառների ավերելու եղբրությունը) և նրան կից ավելի վաղ փակագիրը ճիշտ վերծանել է Ս. Բարխուդարյանը³²: վերջինս գրում է, որ արձանագրության կենտրոնի վարդապետի վեր երկարավուն քառանկյան մեջ եղած Ն. Թ. Հ. «երեք տառերը մնում են անհասկանալի, եթե համարվի :ն: /400/թվ. հայոց, այսպեղբությունը չի համապատասխանում տվյալ ժամանակին»³³, նման հարցադրում չէր էլ կարող առաջանալ, քանի որ արձանագրությունը թվագրված է (1732) և տառաձևերն ու ուղղագրությունը կասկած չեն հարուցում: Բացի այդ, նույն գրքում գետեղված լուսանկարի վրա պարզ երևում է, որ տառերի սկիզբը ջարդված-փշրված է և դրանք ներառնող զուգահեռ գծերը չեն ամբողջանում, իսկ տառերը վարդապի հաճեմատ առիմետրիկ են: Անշուշտ, ձախ եզրում կա

27 «Դիվան», պրակ I, էջ XI:

28 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 151:

29 Նույն տեղում, էջ 130:

30 «Դիվան», պրակ V, էջ 45, 48, 49:

31 Սուրեն Սաղումյան, Փակագրությունը հայ վիմագրության մեջ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 3, էջ 80):

32 «Դիվան», պրակ V, էջ 231:

33 Նույն տեղում, էջ 232:

մեկ տառ ևս (քարի շարդված տեղում), որը Յ-ն է և գրանով ամբողջանում է հապավումն ու վերծանվում՝ Յ=ՅԻՍՈՒՍ, Ն=ՆԱԶՈՎՐԵՅԻ, Թ+ԹԱԳԱԻՈՐ, Հ=ՀՐԵԻՅԻ Անտարակույս ս. Մինաս հուշարձանի 1732 թ. արձանագրության մեջ հապավված է Քրիստոսի խաչելության ժամանակ Օգոստոս կայսրի խորթ որդի Տիրերիոսի (14—37) վճռով Հրեաստանի պրոկուրատոր (դատավոր) Պոնտիոս Պիղատոսի կողմից խաչեցյալի վզից կախված տախտակին գրված հեգնական խոսքերը՝ ՅԻՍՏԱՆ ՆԱՅՈՎՐԵՅԻ, ԹԱԳԱՎՈՐ ՀՐԵԻՅԻ (Ավետարան ըստ Հովհաննու, գլ. ԺԹ), որը հաճախ է հանդիպում մանրանկարներում ու վիմագրերում։ Ի դեպ, այս արձանագրության խոշոր գեղագիր փակագիրը, թեև երկմտանքով, բայց ստույգ վերծանել է Ս. Բարխուդարյանը՝ «Քրիստոսի ծառա տէր Պողոս»։ Գծագրում թույլ տրված փոքր վրիպումները դյուրությամբ լրացվում են գրքի 122-րդ լուսանկարով և ոչ մի կասկած չի մնում նրա ճշտության նկատմամբ։

ԿԻՐԱԿՈՍ (գծ. 29).—Հավանաբար այսպես պետք է բացել Գեղարդավանքի գլխավոր տաճարի արևելյան պատի անշուք փակագրերից մեկը։ Այն նոր է, գրված է անվարժ ձեռքով և պետք է ենթադրել, որ փակագրի տակ հանդես եկող Կիրակոսը վանքին ինչ-որ բարեգործություն է արել, որի գիմաց նրա համար սահմանվել է մեկ պատարագածամ։ Ամբողջական հիշատակագրությունն է. 1877. ԿԻՐԱԿՈՍ/ Ա/1/ ԱԻՐ ԺԱՄ։

Վերը բերվածով չի սպառվում վիմագիր փակագրերի մասին մեր ասելիքը, երկու կարծիք լինել չի կարող, որ փակագրերի և առհասարակ վիմագրեր տեքստերի ստույգ ընթերցանումն ու վերծանումը գիտապատմական և մշակութային կարևորություն ներկայացնող գործ է։

СНОВА ОБ ЭПИГРАФИЧЕСКИХ ШИФРАХ

СУРЕН САГУМЯН

Резюме

Древнейшие обитатели Армянского нагорья на наскальных изображениях использовали идеограммы, иероглифы, которые находим также в клинописных текстах. Традиция продолжалась и передавалась в армянские эпиграфические надписи, начиная с V в. до наших дней.

В армянских эпиграфических надписях имена мецената памятника, архитектора, скульптора, настоятеля храма, учёных-вардапетов, иногда дата строительства и реконструкции строений или отдельные слова даны тайнописью в виде монограмм, точная расшифровка которых и словообразование имеют важную историческую значимость. К сожалению, исследователи, занимающиеся расшифровкой монограмм, не всегда обращают на них должное внимание. Часто, основываясь на не совсем точных воспроизведениях, имена отдельных исторических деятелей, экономические, социальные и другие термины и обороты приводят в искажённом виде. В настоящей статье делается попытка исправить ряд неправильных чтений.